ԲՅՈՒԼԵՏԵՆ

Նոյեմբեր 2023Թ.

ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

Նոյեմբերին գումարվել է Պալատի խորհրդի 2 նիստ՝ 07.11.2023թ.-ին և 28.11.2023թ.-ին:

07.11.2023թ.-նիստի օրակարգում ընդգրկված էր 4 հարց, որոնց վերաբերյալ, քննարկման արդյունքում, ընդունվել են համապատասխան որոշումներ:
86-Ա, 87-Ա, 88-Ա և 89-Ա որոշումներով Խորհուրդը հաստատել է 4 անձանց անդամակցությունը, օրենքի ուժով դադարեցվել է 1 անձի անդամակցությունը, սեփական դիմումի համաձայն դադարեցվել է 1 անձի անդամակցությունը Պալատին: Պալատի աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում է շնորհվել 3 անձանց:

28.11.2023թ. Նիստի օրակարգում ընդգրկված էր 7 հարց, որոնց վերաբերյալ, քննարկման արդյունքում, ընդունվել են համապատասխան որոշումներ:
90-Ա, 91-Ա, 92-Ա ,93-Ա, 94-Ա, 95-Ա որոշումներով Խորհուրդը հաստատել է 4 անձանց և դադարեցրել 4 անձանց անդամակցությունը Պալատին:Պալատի աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում է շնորհվել 6 անձանց:

22-Լ, 23-Լ, 24-Լ, 25-Լ և 26-Լ, 27-Լ, 28-Լ որոշումներով հաստատվել են Պալատի 5 հանձնաժողովների 2024թ. գործունեության տարեկան ծրագրերը: Փոփոխություն է կատարվել Պալատի խորհրդ ի 2021թ. փետրվարի 17-ի N 9-Լ որոշման հավելված 1-ում և 2-ում, հաստատվել է Պալատի 2024թ. արտաքին գնահատման կազմակերպությունների ցանկը և ժամանակացույցը, որոշումները ուժի մեջ են մտնում հաշվապահական հաշվառման և աուդիտորական գործունեության հանրային վերահսկողության խորհրդի հետ համաձայնեցվելուց հետո:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ՆԻՍՏԵՐ

Որակավորման հանձնաժողովը գումարել է 2 նիստ՝ 08.11.2023թ.-ին, 22.11.2023թ.-ին: Նիստերում ընդունված որոշումներով առաջարկվել է Պալատի խորհրդին 7 անձանց շնորհել աուդիտորի կամ փորձագետ հաշվապահի որակավորում, ինչպես նաև հավանություն է տրվել որոշակի դասընթացներ ՇՄԶ ճանաչելուն:

Անդամակցության հանձնաժողովը գումարել է 1 նիստ: Նիստի արդյունքում հաստատվել է պալատին անդամակցության համար դիմած մեկ անձի անդամակցությունը:

ՇՄԶ դասընթացներ

10.11.2023թ..-ին տեղի է ունեցել «Ֆինանսական գործիքներ, ֆինանսական ակտիվների դասակարգում, արժեզրկում, ֆինանսական պարտավորություն և սեփական կապիտալ, ֆինանսական պարտավորությունների փոփոխություն» թեմայով դասընթացը: Այն վարում էր Սյուզաննա Պողոսյանը:

17.11.2023թ. ..-ին տեղի է ունեցել «Տրանսֆերային գնագոյացում» թեմայով դասընթացը: Այն վարում էր Նաիրուհի Ավետիսյանը:

22.11.2023թ ին տեղի է ունեցել Ոչ ռեզիդենտների շահութահարկով հարկման առանձնահատկությունները՝ Օրենսգքրի և կրկնակի հարկումը բացառող համաձայնագրերի շրջանակներում, հիմնական դրույթների ներկայացում և քննարկում (այդ թվում՝ հարց ու պատասխանի ձևաչափով): թեմայով դասընթացը: Այն վարում էր Հովհաննես Յանիկյանը

30.11.2023թ ին տեղի է ունեցել «Որակի վերահսկողություն» թեմայով դասընթացը: Այն վարում էր Էմիլ Վասիլյանը:

PULSAR ծրագրի կրթական և ֆինանսական հաշվետվությունների կոմիտեների 8-րդ համատեղ գիտաժողով

14.11.2023-16.11.2023թթ Վիեննայում տեղի է ունեցել Համաշխարհային բանկի ֆինանսական հաշվետվականության բարեփոխումների կենտրոնի կողմից ֆինանսավորվող Հանրային հատվածի հաշվապահական հաշվառման և հաշվետվականության ծրագրի (PULSAR) կրթական և ֆինանսական հաշվետվությունների կոմիտեների 8-րդ համատեղ գիտաժողովը:

Գիտաժողովի ընթացքում քննարկվել են օրակարգային հետևյալ հարցերը.

1. Ֆինանսական կառավարման միջազգային տեղեկատվական համակարգի (IFMIS) իրականացումը՝ բյուջեի, ֆինանսական հաշվառման/հաշվետվականության և հարկաբյուջետային վիճակագրության միջև ինտեգրումը
2. Տարբեր հաշվետվական շրջանակներում պատրաստված ֆինանսական հաշվետվությունների համախմբումը՝ ներառյալ տեղական ինքնակառավարման մարմինների և պետական սեփականություն հանդիսացող ձեռնարկությունների
3. Կայունության վերաբերյալ հաշվետվությունների ներկայացումը

ՀՄԴ հերթական ժողով

15.11.2023թ.-16.11.2023թ.-ին Վիեննայում տեղի է ունեցել Հաշվապահների միջազգային դաշնության հերթական ժողովը: Ժողովին մասնակցել են Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը և գործադիր տնօրեն Հայկ Մնացականյանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

23.11.2023թ.-ին Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատում տեղի ունեցավ հանդիպում աուդիտորական հանրությանը մտահոգող հարցերի վերաբերյալ: Հանդիպմանը մասնակցում էին Պալատի նախագահ Թաթուլ Մովսիսյանը, Աուդիտորական գործունեության հանձնաժողովի նախագահ Էմիլ Վասիլյանը, Խորհրդի անդամներ, աուդիտորական կազմակերպությունների ղեկավարներ, աուդիտորներ: